

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

**1105 «ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԾՆՇՄԱՄԲ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ԴԱՐԲԻՆ - ԴՐՈՇՄՈՂ» ՈՐԱԿԱԿՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2010

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

(ազգանուն, անուն)

« » 200 թ.

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«Ղարբին -դրոշմող» ՈՐԱԿԱՎՈՐՍԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 1105 «Սետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ»

Կրթութան ոլորտի մասնագիտական /արհեստագործական/ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ «Ղարբին -դրոշմող» ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՍՔԸ՝ միջնակարգ /լրիվ/ ընդհանուր ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 տարի ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

I. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Table with columns for semesters (սեպտեմբեր, հոկտեմ, նոյեմբեր, դեկտեմբեր, հունվ., փետրվ., մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս), II. ժամանակի բյուջեն /շաբաթներով/ (Մոդուլների ամփոփում, Պրակտիկա, Անփոփիչ պետական ատեստավ. նախապ. ստուգման ատեստավորում, Արձակուրդ, Ընդհանր. ԸՆԴՅԱՆՈՒՄ)

Legend for symbols used in the table: Ծեփական ուսուցում, Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, Նախաավարտական, արտադրական պրակտիկա, Մոդուլների ամփոփում, Նախապատրաստում անփոփիչ պետական ատեստավորման, Անփոփիչ պետական ատեստավորում, Արձակուրդ

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քննույթ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն	Այդ թվում			1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		
						Ընդամենը	Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարասմունք	1-ին կիս. շաբ	2-րդ կիս. շաբ.	3-րդ կիս. շաբ.	4-րդ կիս. շաբ.	5-րդ կիս. 17 շաբ.	6-րդ կիս. 17 շաբ.
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5 ; 6տ		72	54	18							36	36
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6տ		18	14		4							18
1.3	Իրավունքի հիմունքներ		5;6տ		36	26	6	4						20	16
1.4	Պատմություն		5տ		36	28		8						36	
1.5	Օտար լեզու		5;6տ		54	42	12							36	18
1.6	Ֆիզիկական կուլտուրա		5;6		68		68							34	34
	ԸՆԴԱՄԵՆԸ				284	164	104	16						162	122
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		5 տ		36	30	6							36	
2.2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		6տ		18	18									18
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	48	6							36	18
3.	ԱՈՒՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցություն		5 տ		36	14	22							36	
3.2	Անվտանգություն և առաջին օգնություն		5 տ		36	18	18							36	
3.3	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		5 տ		54	24	30							54	
3.4	ճարտարագիտական գրաֆիկա և չափագիտություն		5 տ		54	24	30							54	
3.5	Համակարգչային օպերատորության հիմունքներ		5 տ		54	12	42							54	
	ԸՆԴԱՄԵՆԸ				234	92	142							234	
4.	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ														
4.1	Մասնագիտական ներածություն		5 տ		18	12	6							18	
4.2	Նյութագիտություն		5 տ		54	26	28							54	
4.3	Նախապատրաստվածքների ստացման եղանակները		5 տ		54	34	20							54	
4.4.	Մետաղական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստվածքների պատրաստում դրոշմման եղանակով		5 տ		36	12	24							36	
4.5.	Մաքուր աշխատատեղ: Աշխատատեղի մաքրում, գործիքների դասավորում, կատարված աշխատանքի ընդունում		5 տ		18	8	10							18	
	ԸՆԴԱՄԵՆԸ				180	92	88							180	
5.	ՀՍՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
5.1	Դարբնոցային արտադրության տեխնոլոգիական գործընթացների սկզբունքները		6 տ		36	16	20								36
5.2	Դրոշմիչային արտադրության տեխնոլոգիական գործընթացների սկզբունքները		6 տ		90	38	52								90
5.3	Դարբնոցային արտադրության գործիքներ և հանդերձանքներ		6 տ		36	16	20								36
5.4	Դրոշմիչային արտադրության գործիքներ և հանդերձանքներ		6 տ		90	38	52								90
5.5	Դարբնոցա-դրոշմիչային արտադրության սարքավորումների օգտագործման հմտություններ		6 տ		90	38	52								90
5.6	Ավտոմատացված տարրերով դարբնոցա-դրոշմիչային արտադրության գործընթացների իրականացման հմտություններ		6 տ		72	34	38								72
	ԸՆԴԱՄԵՆԸ				414	180	234								414
6.	ԸՆՏՐՈՎԻ		6 տ		48										48
7.	ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ԺԱՄԵՐ				10										10
	ԸՆԴԱՄԵՆԸ				1224	580	574	16						612	612
8.	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				100										
	Շաբաթվա ժամերի քանակը													36	36

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ		N	VII. ԱՆՉՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱՐՈՒՍՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐԳԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Ձեռնբերեցություն			ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ		1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
			2	Օտար լեզվի
	V. ՊՐԱԿՏԻԿԱ		3	Ընդհանուր հումանիտար և սոցիալ- տնտեսական առարկաների
1	Ուսումնական	Կիսամյակ	5	Մշակատնային անվտանգության
		Շաբաթ	1 շաբաթ	Անհատական համակարգիչների
2	Մասնագիտական		6	Դրոշմնապատկերային և նյութագիտության
			3 շաբաթ	Կոմպյուտերային և տեխնիկական գծագրության
			6	Դարբնոցային աշխատանք
			7	
			8	
ԸՆԴԱՄԵՆԸ				
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՑԵՍԱՎՈՐՈՒՄ				
Համալիր պետական քննություն հատուկ մասնագիտական խմբի մոդուլներից				
ԱՐԳԵՍԱՆՈՑՆԵՐ				
1 ընդհանուր դրոշմնապատկերային				
2 Դարբնոցային իրերի պատրաստման				
ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ				
1 Մարզադահլիճ				
2 Մարզահրապարակ				

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգաքննություններ, ստուգողական աշխատանքներ: Ստուգաքննություններ, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:
Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Զննությունների և ստուգաքննությունների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առավելագույնը 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ժամալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը՝ 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել՝ նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լաբորատորիաներ:

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ`

ՀՂՀ-3-09-001

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`

	36 ժամ
Տեսական ուսուցում`	14 ժամ
Գործնական պարապմունքներ`	22 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ`

Չկան

ՈՒՍՈՒՑԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է`

1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները.
2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.
3. մախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.
4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. կատարի փաստաթղթավորում:

ՍՈՂՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱԿՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական պարապմունքներ`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն

տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,
 - ամփոփելը,
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
- դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.
- գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական պարապմունքներ`	4 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ դրանց նշանակության,
- բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր` պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում` ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՆՍՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԱԱՕ – 3-09-001

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

ՍՈՂՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`	36 ժամ
Տեսական ուսուցում	18 ժամ
Գործնական պարապմունք	18 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ` Չկան

ՌԻՍԻՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա.

1. իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը կազմակերպություններում,
3. իմանալ արտադրական սանիտարիայի և հիգենիայի պահանջները,
4. ցուցաբերել առաջին օգնություն:

ՍՈՂՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.
- բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.
- դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.

գ. Ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքների, այլ նորմատիվ ակտերի, աշխատանքի նախապատրաստական և կատարման պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, կարողանում է որոշակի եզրահանգումներ կատարել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական նյութի տրամադրման և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.
- բ. Ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.
- գ. Ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.
- դ. Ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կտրվի տեքստային և պատկերային թեսթ` ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը: Նա պետք է իմանա, անվտանգության տեխնիկական պահանջները և դրա խախտելու դեպքում` որ իրավիճակներում ինչ վնասվածքներ են առաջանում: Առանձին հարցերով պարզաբանվելու է յուրաքանչյուր իրավիճակում վնասվածքները կանխելու և դրանցից պաշտպանվելու քայլերը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերի հիմնական մասին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականության կանոնների հրահանգներ, դիտակտիկ նյութեր, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՌԻՍԻՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.
- բ. Ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.
- գ. Ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցմցումներից պաշտպանվելու միջոցները.
- դ. Ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Նա պետք է կարողանա ճիշտ կազմակերպել իր, աշխատատեղի և կազմակերպության անվտանգ միջավայրը, ինչպես նաև իմանա արտադրական միկրոկլիմայի` ջերմաստիճախի, հարաբերական խոնավության, փոշու առկայության նորմաները և օդափոխության,

ջեռուցման, հակահրդեհային, ջրամատակարարման, ջրահեռացման, լուսավորվածության և այլ սանիտարահիգիենիկ պայմանները, արտադրական վթարներից պաշտպանվելու միջոցները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՈՒՐԱՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական միջոցներ, ուսումնական տարածք, գրականություն, տեսաֆիլմ:

ՈՒՄՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ
Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.
- բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.
- գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.
- դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.
- ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.
- զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնություն ցուցաբերելու կարգը: Պետք է կարողանա ցուցաբերել առաջին օգնություն այրվածքների, թունավորումների, բաց և փակ վնասվածքների, կոտրվածքների, արյունահոսության, գիտակցության կորստի և այլ դեպքերում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՈՒՐԱՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՄՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Դասախոսություն 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԸԱՀ 3 -09-001

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Սովորողին գիտելիքեր տալ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 54 ժամ
Տեսական պարապմունք՝ 24 ժամ
Գործնական աշխատանք՝ 30 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ՝ Չկան

ՈՒՄՈՒՄԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների,
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ,
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում,
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ,

5. դրսևորի քննադատական մտածողություն,
6. կառավարի սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ է մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV), կարողանում է փնտրել և գտնել աշխատատեղ, ըստ էության ներկայացանել իր կենսագրությունը և աշխատանքի կատարման հմտություններն ու առավելությունները:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր, ինչպես նաև կազմակերպել դերային խաղեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
- գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.
- դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ստեղծված իրավիճակներում սովորողի կողմնորոշման հմտությունների հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ, կարողացել է գտնել իրավիճակային ելքեր:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կազմակերպվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.

- գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
- դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:
- ե. ճիշտ վերաբերմունք է դրևևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.
- զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր, կազմակերպել դերային խաղեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.
- բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր, կազմակերպել իրավիճակային խաղեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական պարապմունք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Դրևևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.
- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
- գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի համեմատում է փաստը և հիմքը, հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, մշակված իրավիճակներ կամ խնդիրներ, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 2 ժամ
Գործնական պարապմունք` 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.
- բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).
- գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:
- դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,
- ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.
- զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
- է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 6 ժամ
Գործնական պարապմունք` 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱՎԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԵԳՉ 3- 09 - 001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

«Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտությամբ սովորող ուսանողն ավարտելով այս մոդուլը ձեռք կբերի մասնագիտական աշխատանքային գծագրեր կարդալու, հասկանալու, պարզագույն գծագրեր կատարելու համար կիրառական գիտելիքներ և անհրաժեշտ հմտություններ: Սովորող ուսանողը ձեռք կբերի նաև մեքենամասերի մակերևույթների մաքրության ու որակի, ճշտության դասերի թույլտվածքի ու նստեցվածքի և չափագիտության հասկացողությունների վերաբերյալ գիտելիքներ:

ՄՈԴՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 54 ժամ
Տեսական պարապմունք 24 ժամ
Գործնական ուսուցում 30 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ` 2կան

ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`
- ա. կարդա աշխատանքային գծագրերը և կատարել էսքիզներ.

- բ. տարբերակի մեքենամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը.
- գ. օգտվի թույլտվածքների աղյուսակներից.
- դ. տիրապետի չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով:

ՄՈՂՈՒԼԻ ՓԵՆՏԱՆԱՆ ԿԱՐԳԸ՝

Մողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարդալ աշխատանքային գծագրերը և կատարել էքիզներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճանաչում է տարբեր առարկաների, իրերի և սարքերի գծագրական նշանները,
- բ. էքիզների և սարքերի պայմանական նշանները ճիշտ է կարդում,
- գ. էքիզների և սարքերի պայմանական նշանները ճիշտ է պատկերում,
- դ. ճիշտ է կարդում մեքենամասերի գծագրերը,
- ե. ճիշտ է կարդում և պատկերացնում տարբեր հանգույցների էքիզների հավաքման և ձևավորման աշխատանքները,
- զ. ճիշտ է կատարում իրերի, առարկաների և շինածոների հանգույցների էքիզները:

ՓԵՆՏԱՆԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվի տարբեր առարկաների և սարքերի սխեմաներ և կհանձնարարվի կարդալ սխեման՝ ըստ պայմանական նշանների, պատկերել և կազմել էքիզներ: Կհանձնարարվի ըստ որոշակի դետալների տարրերի կատարել նրանց հավաքման էքիզներ՝ օգտագործելով պայմանական նշանները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը առաջադրանքի ոչ պակաս 70 տոկոսը ճիշտ կատարի:

ՄԵԹՈՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ սարքավորումներ և տարբեր առարկաներ ու դրանց ցուցադրական սխեմաները պատկերներ՝ հնարավոր կրիչներով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք	8 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տարբերակել մեքենամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները,
- բ. ճիշտ է բացատրում մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները,
- գ. ճիշտ է պարզաբանում մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը,
- դ. ճիշտ է մեկնաբանում մեքենամասի անվանական, սահմանային և իրական չափերը

ՓԵՆՏԱՆԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կհանձնարարվի ներկայացնել մեքենամասերի մշակման նախապայմանները, մշակել որակյալ մեքենամասեր՝ հաշվի առնելով դրա համափոխարինելիությունը, մեկնաբանել յուրաքանչյուր հատվածը և չափերը: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքը կատարվի անթերի:

ՄԵԹՈՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տեխնիկական նկարագրեր, գծագրեր, մեքենամասերի մուշտրիմակներ, մշակման նյութեր, դետալների չափագրական սխեմաներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում	6 ժամ
Գործնական պարապմունք	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Օգտվել թույլտվածքների աղյուսակներից

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, ներքին և իրական) և բացատրում ի՞նչ են բացակն ու ձգվածքը,
- բ. ճիշտ է մեկնաբանում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները,
- գ. ճիշտ է թվարկում թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները (կվալիտետները),
- դ. ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից,
- ե. ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը կամ ձգվածքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կհանձնարարվի ներկայացնել հասկացությունները, բացատրել դրանց բաժանումները, ճշգրտությունն ու շեղումները՝ օգտվելով թույլտվածքների աղյուսակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքի կատարման արդյունքում հաշվարկները ճիշտ կլինեն և խոչնդոտող թերություն չի լինի:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ դետալների նմուշօրինակներ, թեմատիկ սխեմաներ, գծագրեր, սահմանված չափորոշիչներ, գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

- Տեսական ուսուցում` 6 ժամ
- Գործնական պարապմունք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Տիրապետել չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, օգտագործվող ժամանակակից չափման միավորները և դրանց սահմանումները,
- բ. ճիշտ է մեկնաբանում գոյություն ունեցող չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները,
- գ. ճիշտ է բացատրում չափող գործիքների կառուցվածքն ու աշխատանքը և դրանցով իրականացնում է հանձնարարված չափումները ու մեկնաբանում վերջիններիս չափելու ճշտությունը,
- դ. ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափածողից ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կհանձնարարվի կատարել գործիքների չափագրում, ներկայացնել դրանց բնութագրիչները, օգտագործել չափագրման սարքերը և մեթոդները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքը կատարվի առնվազն երեք սարքից և մեթոդներից:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ չափագրական սարքեր, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, գծագրական պարագաներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

- Տեսական ուսուցում` 4 ժամ
- Գործնական պարապմունք` 8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` 303 3 - 09 - 001

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

ՍՈՂՈՒ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ` 54 ժամ

Տեսական ուսուցում 14 ժամ
Գործնական աշխատանք 40 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

ՈՒՍՈՒՄԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

- ա. կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել Տեքստային Ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,
- բ. կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,
- գ. կկարողանա պահպանել փաստաթուղթը,
- դ. կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,
- ե. կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,
- զ. կկարողանա տպագրել փաստաթուղթը:
- է. կունենա ինտերնետում աշխատելու իմացություն

ԳՆԱՐՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՔ 1. WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- բ. բացել նոր փաստաթուղթ
- գ. ստեղծաչափի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ
- դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ
- ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում
- զ. փակել փաստաթուղթը
- է. բացել առկա փաստաթուղթը
- ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները

ԳՆԱՐՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Սովորողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Սովորողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Սովորողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Սովորողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղծաչափը Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Սովորողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ
Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 2 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար.
- բ. նշել բառերը և տեքստային հատվածները.

- գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում.
- դ. կատարել տողերի հավասարեցում.
- ե. փոխել միջտողային տարածությունները.
- զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով.
- է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով.
- ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից.
- թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները.
- ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները.
- ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը.
- ժբ. Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղածիզ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ.
- ժգ. պատճենել տեքստը.
- ժդ. տեղափոխել տեքստը.
- ժե. տողադարձել տեքստը.
- ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Սովորողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Սովորողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Սովորողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Սովորողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Սովորողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Սովորողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Սովորողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով:

Ռեսուրսներն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում	4 ժամ
Գործնական աշխատանք	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Փաստաթղթի պահպանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը
- բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը
- գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Սովորողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Սովորողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Սովորողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի

նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ
Գործնական աշխատանք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. պատրաստել աղյուսակ,
- բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
- դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,
- ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները,
- զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,
- է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,
- ը. փոխել աղյուսակի գծերի գույնը,
- թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Սովորողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:

Սովորողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 2 ժամ
Գործնական աշխատանք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Գրաֆիկական խմբագրում և նկարագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,
- բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
- գ. գծագրել կանոնավոր պատկերներ,
- դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով,
- ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,
- զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,
- է. գծագրել տեքստային բլոկներ,
- ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները,
- թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
- ժ. սովորավորել գրաֆիկական օբյեկտները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Սովորողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա: Սովորողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ
Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Փաստաթղթի տպագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,
- բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,
- գ. տպագրել փաստաթուղթը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն: Սովորողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ
Գործնական պարապմունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ինտերնետում աշխատելու իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,
- բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,
- գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,
- դ. իմանալ History հրամանի նշանակությունը,
- ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,
- զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,
- է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,
- ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,
- թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,
- ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,
- ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակությունը,
- ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Սովորողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
2. Սովորողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
3. Սովորողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
4. Սովորողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
5. Սովորողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:

6. Սովորողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:
7. Սովորողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում	6 ժամ
Գործնական աշխատանք	10 ժամ

Բաղադրիչ 2

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության
1105 «Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ» մասնագիտության
«Դարբին - դրոշմող» որակավորման հիմնական կրթական ծրագրի
ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՂՈՒԼԻ ՂԱՍԻՉԸ՝ ՄՍՏԳ 3-09-001

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է մետաղների ճնշմամբ մշակման մասնագիտության վերաբերյալ սովորողին տալ գիտելիքներ ճնշմամբ մշակման, դրա դերի ու նշանակության, զարգացման պատմության, դարբնոցա-դրոշմիչային արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքների, հարմարանքների ու սարքավորումների, դրանց դերի և նշանակության մասին:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	18 ժամ
Տեսական պարապմունք	12 ժամ
Գործնական աշխատանք	6 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՋԱՆՋՆԵՐԸ՝ Զկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա մետաղների ճնշմամբ մշակման առաջավոր տեխնոլոգիաները և զարգացման ուղիները.
2. ճանաչի մետաղների ճնշմամբ մշակման արհեստանոցում օգտագործվող հիմնական մետաղական և ոչ մետաղական նյութերը, գործիքները, դարբնոցա-դրոշմիչային հարմարանքները, տաքացման ու դրոշմման սարքավորումները և իմանա դրանց նշանակությունը.
3. իմանա գործիքների նշանակությունը, ճիշտ օգտագործման տեղը և ձևը:

ԳՆԱՋԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանա մետաղների ճնշմամբ մշակման առաջավոր տեխնոլոգիաները և զարգացման ուղիները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում ճնշմամբ մշակման տեխնոլոգիաները և դրանց զարգացման նորագույն ուղիները,
- բ. ճիշտ է ներկայացնում ճնշմամբ մշակման գործընթացի նորագույն ձևերը և եղանակները:

ԳՆԱՋԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է խնդիրների օգնությամբ, ըստ որի սովորողը պետք է ներկայացնի (գրի), թե, ո՞ր մետաղների մշակման դեպքում ի՞նչ տեխնոլոգիաներ, ի՞նչ գործիքներ և նյութեր կարող են օգտագործվել:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրված խնդիրները լուծվել են աննշան սխալներով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մետաղական և ոչ մետաղական նյութերի, գործիքների նկարագրերը (դիտակտիկ), նորատիվները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	8 ժամ
Գործնական աշխատանք`	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ճանաչել մետաղների ճնշմամբ մշակման արհեստանոցում օգտագործվող հիմնական մետաղական և ոչ մետաղական նյութերը, գործիքները, դարբնոցա-դրոշմիչային հարմարանքները, տաքացման ու դրոշման սարքավորումները և իմանա դրանց նշանակությունը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճանաչում և անվանում է ճնշմամբ մշակման արհեստանոցում օգտագործվող հիմնական մետաղական նյութերը, գործիքները, դրոշման և դարբնոցային բազմաբնույթ սարքավորումներն ու հարմարանքները, բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր մակնիշի մետաղի, գործիքի, սարքավորման ու հարմարանքի նշանակությունը, կիրառման ոլորտը,
- գ. ցույց է տալիս համապատասխան գործիքների ու սարքավորումների օգտագործման ձևը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվելու է թեսթի օգնությամբ, ըստ որի սովորողը պետք է նշի, թե, ո՞ր մետաղների մշակման դեպքում, ի՞նչ տեխնոլոգիաներ, ի՞նչ գործիքներ և նյութեր են օգտագործվում: Գործնական հանձնարարականով ստուգվելու է, թե ուսանողը ինչպես է ընտրում և կիրառում կատարման տեխնիկան:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե թեսթում թույլ են տրվում աննշան սխալներ, իսկ գործնական կատարումն անթերի է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մետաղական և ոչ մետաղական նյութերը, գործիքները, դրոշման տարբեր ձևերի համար նախատեսված հարմարանքները: Արդյունքի ուսուցումն իրականացվելու է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿը`

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական պարապմունք`	4 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ՄՍՏՃ 3-09-002

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Նպաստել, որպեսզի սովորողը ձեռք բերի գիտելիքներ սև և գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների տեսակների, հատկությունների, մակնիշավորման սկզբունքների և կիրառության բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերի մետաղները, համաձուլվածքները, նախապատրաստվածքների պրոֆիլները ճանաչելու մակնիշավորման սկզբունքները գործնականում օգտագործելու կարողություն: Սովորողի մոտ ձևավորել մետաղական նյութ ընտրելու, լեգիրման, ջերմային և ջերմաքիմիական մշակման, պլաստիկ դեֆորմացիայի, վերաբյուրեղացման, ջերմամեխանիկական մշակման գործընթացների վերաբերյալ գիտելիքներ, հասկացողություններ և կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`	54 ժամ
Տեսական պարապմունք	26 ժամ
Գործնական աշխատանք	28 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ` Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Իմանա պողպատների և գունավոր մետաղների դասակարգումը, նրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները.
2. Իմանա պողպատների և գունավոր մետաղների մակնիշավորումը.
3. Հիմնավորի նյութը: Աշխատանքային տեղը նախապատրաստի շինածո պատրաստելու գործողությամբ.
4. Ստանա պահանջվող շինածոն, պահպանելով նախատեսված չափերն ու որակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ պողպատների և գունավոր մետաղների դասակարգումը, նրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում պողպատների, որպես երկաթածխածնային միացության, կառուցվածքային էությունը և բացատրում դրանց դասակարգումը,
- բ. ճիշտ է մեկնաբանում պողպատների և գունավոր մետաղների հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն,
- գ. ճիշտ է մեկնաբանում պողպատների և գունավոր մետաղների կիրառման բնագավառը ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից,
- դ. կարողանում է մետաղների մուշների կոտրվածքներով ճանաչել և տարբերել և գունավոր մետաղները և պողպատները,
- ե. կարողանում է ձեռքի փականագործական գործիքներով՝ խարտոց, սրոցաքար, հղկաքար գնահատել պողպատի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է խնդիրների ու հարցերի օգնությամբ, որոնց միջոցով սովորողը կներկայացնի պողպատների ու գունավոր մետաղների կառուցվածքը, հատկությունները, դրանց կիրառման բնագավառները: Գործնական աշխատանքի միջոցով ստուգվելու է, թե որքանով է ճանաչում մետաղներ և գնահատի դրանց հատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրված խնդիրներում թույլ են տրվել աննշան սխալներ, իսկ գործնական աշխատանքը հիմնականում ճիշտ է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պողպատի և ոչ գունավոր մետաղների մուշներ, փականագործական գործիքներ: Արդյունքի ուսուցումն իրականացվելու է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	8 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ պողպատների և գունավոր մետաղների մակնիշավորումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում պողպատների մակնիշավորումը,
- բ. ճիշտ է ներկայացնում և գունավոր մետաղների մակնիշավորումը,
- գ. կարողանում է վերծանել պողպատների և գունավոր մետաղների մակնիշները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարցերի օգնությամբ, որոնց միջոցով սովորողը կներկայացնի պողպատների և գունավոր մետաղների մակնիշավորումը: Գործնական համեմարարականի միջոցով ստուգվելու է, թե որքանով է սովորողը ճանաչում և վերծանում մետաղների մակնիշները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հարցերին և հանձնարարականին հիմնականում տրվել է ճիշտ պատասխան:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, պողպատի և գունավոր մետաղների մակնիշավորված մոդելներ: Արդյունքի ուսուցումն կարող է իրականացվելու համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Հիմնավորել նյութը: Աշխատանքային տեղը նախապատրաստել շինածո պատրաստելու գործողությանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ընտրում նախապատրաստվածքի նյութի ընտրությունը,
- բ. ճիշտ է ընտրում նախապատրաստվածքի նյութի չափերը, հիմնավորում լեգիրող էլեմենտների առկայությունը, և որոշում չափաքանակները,
- գ. ճիշտ է որոշում նախապատրաստվածքի նյութի տաքացման, սառեցման ջերմաստիճանները տաքացման ձևը, մշակման ջերմաստիճանային տիրույթը,
- դ. ճիշտ է ընտրում նախապատրաստվածքի մշակման համար անհրաժեշտ գործիքները, օժանդակ նյութերն ու սարքավորումները,
- ե. ճիշտ է ընտրում չափող և ստուգող սարքավորումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական խնդիրների առաջադրման օգնությամբ, որոնց միջոցով սովորողը պետք է ընտրի նախապատրաստվածքի նյութերը, դրանց չափաբաժինները և ջերմային մշակման պայմանները, կարողանում է օգտվել անհրաժեշտ գործիքներից ու սարքերից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարականը կատարվել է անթերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նախապատրաստվածքի համար անհրաժեշտ նյութեր, գործիքներ, սարքավորումներ: Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ստանալ պահանջվող շինածոն, պահպանելով նախատեսված չափերն ու որակը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. չափագրումը կատարում է ճշգրիտ,
- բ. ջերմային մշակման ռեժիմները լրիվ համապատասխանում են ընտրված նյութի մակնիշին,
- գ. մշակված շինածոն իր չափերով և որակով համապատասխանում է առաջադրված պահանջարկին,
- դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական խնդիրների առաջադրման օգնությամբ, որոնց միջոցով սովորողը պետք է ստանա պահանջվող շինածոն՝ նախապես կատարի չափագրում, նյութի ընտրություն, ջերմային մշակում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ստացված շինածոն համապատասխանում է նախատեսված չափերին և որակին, հանձնարարականը կատարվել է անթերի և պահպանվել է անվտանգության կանոնները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տարբեր հիմքով շինածոներ, չափագրման համար անհրաժեշտ սարքեր կամ միջոցներ, գործիքներ, սարքավորումներ: Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել ջերմային մշակման օպերացիաներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է կատարում նախապատրաստվածքի նախնական ջերմային մշակումը` թրծումը,
- բ. ճշգրիտ ռեժիմներով է կատարում պատրաստվող շինածոի մխումը և արձակումը,
- գ. ապահովում է բավարար կարծրություն, ամրություն և ֆիզիկամեխանիկական անհրաժեշտ հատկություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական աշխատանքի առաջադրման օգնությամբ, որոնց միջոցով սովորողը պետք է թրծի նախապատրաստվածքը, ընտրի մշակման ռեժիմը և կատարի ջերմային մշակման օպերացիաները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե անթերի կատարվել է ջերմային մշակումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ջերմային մշակման սարքեր, տարբեր հիմքով շինածոներ, անվտանգության պարագաներ: Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ՄՍՏՃ 3-09-003

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային էսքիզից և տեխնիկական քարտից օգտվելու, գլոցման և լարածգման համար նախատեսված գործիքներն ու սարքերն օգտագործելու, գլոցման և լարածգման եղանակով տեխնիկական քարտում նշված չափերով և պրոֆիլներով նախապատրաստվածքներ պատրաստելու կարողություններ:

ՄՈԴՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`	54 ժամ
Տեսական պարապմունք	34 ժամ
Գործնական աշխատանք	20 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ` Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած ՄՍՏՃ 3-09-002 մոդուլը:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

- Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`
- 1. Օգտվի աշխատանքային էսքիզից և կարդա տեխնիկական քարտը
- 2. Տարբերակել գլոցման և լարածգման գործիքները, սարքերը, օժանդակ նյութերն ու հարմարանքները, ընտրել դրանցից օգտվելու եղանակը
- 3. Կատարել գլոցում և լարածգում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՈՐԳԸ`

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Օգտվել աշխատանքային էքսիզից և կարդալ տեխնիկական քարտը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքային էքսիզի վրա գլոցման և լարածգման եղանակով ստացված նախապատրաստվածքներից պատրաստվող իրերը,

բ. ճիշտ է կարդում տեխնիկական քարտում նշված՝ նախապատրաստվածքների չափերը և պրոֆիլները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական խնդիրների առաջադրման օգնությամբ, որոնց միջոցով սովորողը ներայացնում է էքսիզային նմուշները, դրանց ստացման եղանակները: Կարդում և նկարագրում է տեխնիկական քարտը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարականը կատարվել է անթերի:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեխնիկական քարտեր և նախապատրաստվածքը նկարագրող այլ դիտակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տարբերակել գլոցման և լարածգման գործիքները, սարքերը, օժանդակ նյութերն ու հարմարանքները, ընտրել դրանցից օգտվելու եղանակը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում գլոցման և լարածգման սարքերը և նրանց օգտագործման ձևերը,

բ. ճիշտ է ընտրում լարածգման համար նախատեսված օժանդակ նյութերը,

գ. ճիշտ է ընտրում օժանդակ հարմարանքները և դրանցից օգտվելու եղանակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարցերի օգնությամբ, որոնց միջոցով սովորողը կնկարագրի գլոցման և լարածգման սարքերը և դրանց օգտագործման ձևերը: Գործնական հանձնարարականի միջոցով ստուգվելու է, թե որքանով է սովորողը գլոցման և լարածգման ժամանակ կողմնորոշվում օժանդակ նյութեր ու հարմարանքների ընտրության մեջ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հարցերին և հանձնարարականին հիմնականում տրվել է ճիշտ պատասխան:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, դիտակտիկ նյութեր, գլոցման և լարածգման սարքեր, օժանդակ նյութեր, հարմարանքներ: Արդյունքի ուսուցումն կարող է իրականացվելու համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել գլոցում և լարածգում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ըստ աշխատանքային քարտի՝ ճիշտ է ընտրում գլոցման և կորզանման սարքերի վրա գտնվող համապատասխան բանվորական տարրերը,

բ. ճիշտ է կատարում գլոցման և կորզանման գործողությունները,

գ. պահպանում է մետաղի ջերմային մշակման ռեժիմը,

դ. ստացված նախապատրաստուքները համապատասխանում են աշխատանքային քարտում նշված

- չափերին,
- ե. նախապատրաստվածքների մեխանիկական հատկությունները պահպանված են,
- զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական աշխատանքի առաջադրման օգնությամբ, որոնց միջոցով սովորողը պետք է ընտրի գլոցման և կորզանման անհրաժեշտ սարքերը, կատարի աշխատանքային գործողություններ, ստանա առաջադրված աշխատանքային քարտին համապատասխանող նախապատրաստուքներ:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշխատանքը կատարվել է անթերի և պահպանվել է տեխնիկական, մեխանիկական և անվտանգության պայմանները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ջերմային մշակման սարքեր, գլոցման և կորզանման գործիքներ, տարբեր հիմքով շինածոներ, անվտանգության պարագաներ: Արդյունքի ուսուցումն իրականացվում է և համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	10 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ՄԵՏԱՂԱԿԱՆ ՇԻՆԱԾՈՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ: ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԴՐՈՇՄՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝

ՄՍՏԵ 3-09-004

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ նախապատրաստվածքներ պատրաստել դրոշմման եղանակով:

ՍՈՂՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

36 ժամ

Տեսական պարապմունք	12 ժամ
Գործնական աշխատանք	24 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՍՏԵ 3-09-002 մոդուլը:

ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Կատարել չափանշման աշխատանքներ:
2. Կատարել դրոշմման աշխատանքներ:
3. Կատարել կտրման և հատման աշխատանքներ:
4. Կատարել պատրաստվող շինածոյի ստուգման աշխատանքներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել չափանշման աշխատանքներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում չափանշում կատարելու համար նախատեսված գործիքները և նրանց օգտագործման ձևերը,
- բ. ըստ տեխնիկական էսքիզի՝ ճիշտ է կատարում չափանշման աշխատանքները,
- գ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարցերի օգնությամբ, որոնց միջոցով սովորողը ներկայացնում է չափանշման գործիքները, դրանց օգտագործման ձևերը, կարողում էսքիզներ և կատարում չափանշումներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարականը կատարվել է անթերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեխնիկական քարտեր և նախապատրաստվածքը նկարագրող այլ դիտակտիկ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել դրոշմման աշխատանքներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. գիյոտիմային տարբեր մկրատներից, դրոշմող, կռող, ծնկավոր, շուռտվիկային, ժապավենային, ուղղման, խզման, լծակավոր, դրոշմահատ, ունիվերսալ և այլ տեսակի մամլիչներից ճիշտ է ընտրում շինածոի ստացման համար անհրաժեշտ սարքավորումը,

բ. ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարմանը համապատասխանող մեխանիկական և հիդրավլիկական, սառը և տաք դրոշման, մեքենաները և մուրճերը,

գ. ճիշտ է օգտվում դրոշմման համար նախատեսված օժանդակ հարմարանքներից,

դ. ճիշտ է ընտրում ածխածնային, կոնստրուկցիոն, լեգիրված և գործիքային պողպատներից և համաձուլվածքներից, ինչպես նաև ալյումինե, մանգանի, տիտանի և նիկելի հիմքով համաձուլվածքներից շինածոի համար նյութը,

ե. արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին,

զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական աշխատանքի առաջադրման օգնությամբ, որի միջոցով սովորողը տարբեր տեսակի մամլիչներից ընտրում է շինածոի ստացման համար անհրաժեշտ սարքավորումներ, դրոշմման մեքենաներ և տարբեր համաձուլվածքներից նյութեր:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե անթերի կատարվել է դրոշմման աշխատանքներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր տեսակի մամլիչներ, դրոշմման սարքավորումներ և տարբեր համաձուլվածքների շինածոի համար նյութեր:

Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	4 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել կտրման և հատման աշխատանքներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. տարբերակում է կտրման-հատման համար նախատեսված գործիքներն ու հարմարանքները,

բ. ճիշտ է ընտրում դարբնոցային` հարվածային, սեղմող, ընդգրկող բռնող և այլ գործիքները և սարքերը,

գ. ճիշտ է ընտրում մկրատների և հատիչների տեսակները` ըստ անհրաժեշտության,

դ. ճիշտ է ընտրում հատման համար նախատեսված օժանդակ հարմարանքները,

ե. ճիշտ է կատարում կտրման և հատման գործողությունը,

զ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական աշխատանքի առաջադրման օգնությամբ, որի միջոցով սովորողը կտրման ու հատման գործիքներից ու սարքերից` ըստ առաջադրանքի ընտրում է դարբնոցային և հատիչային անհրաժեշտ գործիքներ ու սարքեր և կատարում հատման, կտրման աշխատանք:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ըստ անհրաժեշտության ճիշտ է ընտրվել գործիքը և անբերի կատարվել է կտրում- հատում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ կտրման-հատման տարբեր գործիքներ, սարքավորումներ և օժանդակ հարմարություններ, դիտակտիկ նյութեր, գծապատկերներ:

Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կատարել պատրաստվող շինածոյի ստուգման աշխատանքներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ընտրում պատրաստվող շինածոյի համար անհրաժեշտ չափման գործիքները և սարքերը,
- բ. ճիշտ է կատարում գծային չափման աշխատանքները,
- գ. կարծրաչափերի կիրառմամբ ճիշտ է որոշում շինածոյի կարծրությունները,
- դ. պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական աշխատանքի առաջադրման օգնությամբ, որի ընթացքում սովորողը ընտրում է անհրաժեշտ գործիքները և սարքերը և կատարում շինածոյի գծային չափում, կարծրաչափով որոշում է կարծրությունը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ըստ անհրաժեշտության ճիշտ է ընտրվել գործիքները և անբերի կատարվել է շինածոյի ստուգման աշխատանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ`

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական ուսուցման և աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիտակտիկ նյութեր, շինածոյի չափման և կարծրաչափման տարբեր գործիքներ, սարքավորումներ և օժանդակ հարմարություններ:

Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	2 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՔՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ: ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄԱՔՐՈՒՄ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՄՈՒՄ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ՄՍՏՃ 3-09-005

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ` Սողուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատատեղը էկոլոգիապես մաքուր պահելու, մաքրելու և կատարված աշխատանքը հանձնելու կարողություններ:

ՍՈՂՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ`	18 ժամ
Տեսական պարապմունք	8 ժամ
Գործնական աշխատանք	10 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ` Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՍՏՃ 3-09-003 մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

- Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`
 1. Աշխատատեղի մաքրում, էկոլոգիական չափանիշների ապահովում, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում:
 2. Մաքուր աշխատատեղի ապահովում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Աշխատատեղի մաքրում, էկոլոգիական չափանիշների ապահովում, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ընտրում արտահագուստը, ձեռքերը, գործիքները մաքրելու համար նախատեսված խոզանակները,
- բ. աշխատախսեղանը մաքուր է, աշխատանքային գործիքները դասավորված,
- գ. աշխատանքի ժամանակ պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները,
- դ. աշխատատեղը բավարարում է էկոլոգիական պահանջներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է տեսական ու գործնական ուսուցման միջոցով, որի ընթացքում սովորողը պետք է ընտրի արտահագուստը, ձեռքերը, գործիքներ մաքրելու խոզանակները, կարողանա մաքուր, հարմարավետ և անվտանգության կանոններին համապատասխան դասավոր և տեղաբաշխել աշխատեղը և միջավայրը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարված առաջադրանքը կատարվել է ամբերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիտակտիկ նյութեր, աշխատատեղ, աշխատանքային գործիքներ, սահմանված աշխատանքային անվտանգության կանոններ և պայմաններ:

Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մաքուր աշխատատեղի ապահովում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. աշխատատեղում պահպանում է մաքրություն,
- բ. աշխատատեղը մաքուր է, թափոնները հեռացված,
- գ. աշխատատեղը մաքրված է չօգտագործվող նյութերից և իրերից,
- դ. աշխատատեղը բավարարում է էկոլոգիական պահանջներին

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է տեսական ու գործնական ուսուցման միջոցով, որի ընթացքում սովորողը պետք է մաքրի աշխատատեղը, խնամի ու դասավորի գործիքները, տեսակավորի անհրաժեշտ ու երկրորդական նյութեր, դրսևորվում է կոկիկությամբ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարված առաջադրանքը կատարվել է ամբերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիտակտիկ նյութեր, աշխատատեղ, աշխատանքային գործիքներ, տարրաներ, խոզանակներ, մաքրող նյութեր, օդափոխիչ: Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԴԱՐԲՆՈՑԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»

ՄՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՄՄՏՃ 3-09-006

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի դարբնոցային արտադրության ասպարեզում օգտագործվող գործընթացների սկզբունքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և կիրառական հմտություններ

ՄՈՂՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	36 ժամ
Տեսական պարապմունք	16 ժամ
Գործնական աշխատանք	20 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՋԱՆՋՆԵՐԸ՝ Մուտքային պահանջները՝ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՄՄՏՃ 3-09-002 ՄՄՏՃ 3-09-004 մոդուլները

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Ներկայացնել դարբնոցային արտադրության էությունը և հնարավորությունները
2. Բնութագրել դարբնոցային արտադրության հիմնական գործընթացները և ստացվող արտադրանքները
3. Ներկայացնել դարբնի աշխատատեղի կազմակերպման և սպասարկման հարցերը
4. Ցուցաբերել անհրաժեշտ հմտություններ դարբնոցային արտադրության տեխնոլոգիական գործընթացների իրականացման ասպարեզում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել դարբնոցային արտադրության էությունը և հնարավորությունները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում դարբնոցային արտադրության լայն հնարավորությունները որպես մեքենամասերի պատրաստման բարձրարտադրողական և նյութի խնայողաբար օգտագործման առաջատար եղանակ,
- բ. ճիշտ է ներկայացնում արտադրվող կռվածքները որպես բարձր ամրություն և մաշակայունություն ունեցող արտադրանքներ, համեմատած ձուլման, մեխանիկական մշակման և այլ եղանակների հետ,
- գ. ճիշտ է ներկայացնում դարբնի մասնագիտությունը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարցերի օգնությամբ, որոնց միջոցով սովորողը ներկայացնում է դարբնի մասնագիտական նկարագիրը, դարբնոցային արտադրության հնարավորությունները, առաջադրված արտադրանքի տեխնոլոգիական առավելությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարականը կատարվել է անփերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեխնիկական սխեմաներ, գծապատկերներ այլ դիտակտիկ նյութեր, դարբնոցային արտադրանքի տարբեր նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բնութագրել դարբնոցային արտադրության հիմնական գործընթացները և ստացվող արտադրանքները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում դարբնոցային արտադրության տեխնոլոգիական հիմնական գործընթացները՝ մետաղի տաքացումը, նստեցման, կռածգման, կտրման, անցքահատման, բաշխման, եռակցման և մյուս գործընթացները,
- բ. ճիշտ է ներկայացնում կռման տեխնոլոգիական գործընթացներով ստացվող տիպային կռվածքների՝ օղակների, վռանների, լիսեռների, ձողածն շինվածքների, ինչպես նաև կենցաղային և գեղարվեստական նշանակություն ունեցող իրերի նախապատրաստվածքների ընտրությունը և անցումների հաջորդականությունը,
- գ. ճիշտ է ներկայացնում ստացվող կռվածքների առանձնահատկությունները, պատկերում դրանց սխեմատիկորեն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է հարցերի և գործնական առաջադրանքների օգնությամբ, որոնց միջոցով սովորողը ներկայացնում է դարբնոցային արտադրության տեխնոլոգիական մի շարք գործընթացներ, ստացվող հնարավոր կռվածքները, սխեմատիկորեն պատկերում առաջադրված կռվածքը և նկարագրում առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե հանձնարարականը հիմնականում կատարվել է:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, տեխնիկական սխեմաներ, գծապատկերներ այլ դիտակտիկ նյութեր, դարբնոցային արտադրանքի և կռվածքների տարբեր նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել դարբնի աշխատատեղի կազմակերպման և սպասարկման հարցերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում դարբնի աշխատատեղը, կռման մուրճի, տաքացման վառարանի, օգտագործվող հիմնական և օժանդակ գործիքների հարմարավետ տեղաբաշխումը,
- բ. ճիշտ է ներկայացնում նախապատրաստվածքների, կռվածքների և մնացորդների հարմարավետ տեղաբաշխումը,
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատատեղը նախապատրաստվածքներով սպասարկման, արտադրանքի հանձնման, գործիքների սպասարկման, մուրճերի վրա դրանց ամրացման եղանակները,
- դ. ճիշտ է ներկայացնում գործիքները արտադրամասի համապատասխան պահեստներում պահպանելու, հաշվառելու, վերանորոգելու մեխանիզմները,
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրամասի պետի, հերթափոխի պետի, կարգաբերողի գործունեությունը աշխատատեղի սպասարկման ոլորտում,
- զ. ցուցաբերում է աշխատատեղի կազմակերպման և սպասարկման գործնական հմտություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի գնահատումը կատարվելու է գործնական առաջադրանքի միջոցով, որի ընթացքում սովորողը տեղաբաշխում և ներկայացնում է դարբնի աշխատատեղը, առաջադրված աշխատանքի համար անհրաժեշտ և ոչ անհրաժեշտ սարքավորումների, նյութերի և արտադրանքի դասավորվածությունը, ինչպես նաև դրանց պահեստավորման, պահպանման, հաշվառման, վերանորոգման մեխանիզմները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է հմտությամբ և կանոններին համապատասխան:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական առաջադրանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ դիտակտիկ նյութեր, աշխատատեղ, աշխատանքային գործիքներ, տարրաներ, խոզանակներ, մաքրող նյութեր, օդափոխիչ, պահեստային մաս, օժանդակող սարքեր:

Արդյունքի ուսուցումն իրականացվում է համապատասխան կաբինետում կամ արհեստանոցում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել անհրաժեշտ հմտություններ դարբնոցային արտադրության տեխնոլոգիական գործընթացների իրականացման ասպարեզում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կարողանում է մշակել տիպային կռվածքների՝ օղակների, վռանների, ատամնանիվների և լիսեռատիպ շինվածքների կռման տեխնոլոգիական գործընթացների հաջողականությունը անցումների չափերով, ընտրել նախապատրաստվածք և տաքացման ռեժիմ,
- բ. կարողանում է հիմնավորել ընտրված տեխնոլոգիական տարբերակը, հիմք ունենալով գործընթացի տնտեսական շահավետությունը,
- գ. կարողանում է գործնականորեն ցուցադրել կռման գործընթացներ իրականացնելու հմտություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

